



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 11074
Փետրուար 17, 1964

Հոգեշնորհ
Տ. Միւռոն Մ. Վրդ. Կրճիկեան
Հոգեւոր Հովիւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Մխական Խորհուրդի
Ուստր.

Սիրելի Հայր Միւռոն,

Ստացած ենք 1964 Փետրուար 15 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 23ին գումարուած Տա-
րեկան Մխական Ժողովը կատարած է Մխական Խորհուրդի մասնակի ընտրու-
թիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդունքը, կը խնդրէք ընտրուած
անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանո-
նադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած ըստ
օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ անդամ Մխական Խոր-
հուրդի:

Տիարք՝ Թորգոմ Խուլոյեան
Փիթըր Նալպանտեան
Ճօրն Հերոսեան
Ձարլըս Մարիկեան
Սիսիլ Ասլանեան
Եղուարդ Պետրոսեան

Այսու օրհնելով Մխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձե-
զի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան
տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մեամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի